



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

-- դեկտեմբերի 2020 թվականի N°---Ա

քաղ. Երևան

**«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ԱՐՓԻՆԵՏ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԱՄՐԱԿՑՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱՑԱՆՑԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԱԶԱՏ ԹՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՄԱՆ ԲԱՎԱՐԱՐ ՀԻՄՔԵՐԻ
ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (ընկերությունը 2020 թվականի նոյեմբերի 16-ից վերանվանվել է «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ») (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի նոյեմբերի 12-ի գրությունը, որի համաձայն Ընկերությունը հայտնել է, որ Երևան քաղաքի Իսակովի և Ֆ.Վերֆելի փողոցների խաչմերուկից մինչև Լուսինյանց 5 հատվածում վարձակալության հիմունքներով «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը խողովակաշար տրամադրել չեն կարող, քանի որ Ընկերությունն այդ հատվածում ունի գործող խողովակաշարի սահմանափակ քանակություն և առաջիկա 3 տարիների ընթացքում նախատեսվում է անցկացնել օպտիկամանրաթելային մալուխ,

բ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի նոյեմբերի 18-ի գրությանն ի պատասխան Ընկերության 2020 թվականի նոյեմբերի 23-ի գրությունը, որի համաձայն Ընկերությունը հայտնել է, որ նշված հատվածում առկա խողովակները ներկայումս լիովին օգտագործվում են Ընկերության առկա մալուխներով և կազմում են նշված ենթակառուցվածքի հաշվարկային թողունակության ավելի քան 33 տոկոսը: Ընկերության ամրակցված ցանցի առաջիկա տարիների ստրատեգիական զարգացման ծրագրի մաս է կազմում բաժանորդային հասանելիության օպտիկամանրաթելային (FTTX) ցանցի կառուցումը Երևան քաղաքի ողջ տարածքում և Հայաստանի Հանրապետության որոշ մարզերում: Ընդ որում, Երևան քաղաքի Կենտրոն և Դավիթաշեն համայնքներում այդ

աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2022 թվականի ավարտը: Ցանցի մագիստրալային հատվածի իրականացման համար առկա խողովակաշարերի ճնշող մեծամասնությունում անց են կացվելու MICRODUCT տիպի 1-ից 5 օպտիկամանրաթելային մալուխներ, որոնց տրամագիծը կազմում է 34-ից մինչև 56 միլիմետր: Ցանցի զարգացման նախնական տեխնիկական նախագծում առկա է նաև խնդրո առարկա խողովակաշարը, ինչը նշանակում է, որ խողովակաշարի՝ առանց այդ էլ սահմանափակ թողունակությունը լիովին կհագենա և 80-85 տոկոս ցուցանիշով կսպառվի մոտակա 2-3 տարիների ընթացքում, ավելին՝ խողովակաշարերում մալուխների անցկացման պատմականորեն կիրառված տեխնոլոգիան պրակտիկայում հնարավորություն չի տալիս մեկ խողովակում անցկացնել 5-6 մալուխից ավելի, անկախ մալուխների տրամագծից: Ընկերությունը հայտնել է նաև, որ «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը միջօպերատորական համագործակցության բաժնի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով նախկինում տրամադրված տեխնիկական պայմանի նախնական նախագիծը կազմվել է Ընկերությունում առկա գծագրերի հիման վրա, որը հետագայում ճշտվել է տեղում՝ դիտահորերի և խողովակաշարերի ուսումնասիրության արդյունքում,

զ) Հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի №414Ն որոշմամբ հաստատված՝ հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնները, որի համաձայն՝ խողովակի ազատ թողունակություն է համարվում պահանջվող հասցեների միջև հանրային ամրակցված հեռախոսացանցի գծի ենթակառուցվածքի մաս կազմող խողովակի ուղղահայաց կտրվածքի մակերեսի 70 տոկոսի չօգտագործված մասը, իսկ կանոնների 2-րդ կետի համաձայն՝ «...Եթե խողովակի ազատ թողունակությունը սպառված չէ և որևէ օպերատորի կողմից հայտ է ներկայացվել ազատ թողունակության վարձակալության համար, ապա որպես խողովակի ազատ թողունակություն կարելի է օգտագործել խողովակի ուղղահայաց կտրվածքի մինչև 75 տոկոսը՝ ներառյալ պահանջվող թողունակությունը:»,

դ) որ Հանձնաժողովը, ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված դիմումը մերժելու պատճառ հանդիսացող հիմնավորումները (այդ թվում՝ կից ապացույցները), գտնում է, որ առկա են Ընկերության կողմից «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի մերժման բավարար հիմքեր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության հանրային ամրակցված ցանցի

գարգացման տեխնիկական նախագծով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում խնդրո առարկա խողովակաշարի թողունակությունը 80-85 տոկոսով կսպառվի առաջիկա 2-3 տարիների ընթացքում, և

հիմք ընդունելով Հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի №414Ն որոշումը՝
Հանձնաժողովը որոշում է.

1. Ընդունել Ընկերության կողմից «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի մերժման բավարար հիմքերի առկայությունը և թույլատրել Ընկերությանը մերժել դիմումը:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
 - 1) սույն որոշումը հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում Հանձնաժողովին հասցեագրված միջնորդության հիման վրա կարող է վերանայվել.
 - 2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ